ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/14371-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1264-20.02.2026,13.04.2026-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ նաև՝ Նախագիծ) առաջարկվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով խստացնել դրա դեմ տարվող պատժողական քաղաքականությունը՝ քրեական պատասխանատվությունը ծանրացնող նոր հանգամանքներ նախատեսելու միջոցով:

Գտնում ենք, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է խստացնել իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդված) և առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ

դրանց ածանցյալների կամ պրեկուրսորների ապօրինի շրջանառության հանցակազմերի համար նախատեսված պատժաչափերը:

Մասնավորապես, առաջարկում ենք.

- ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասում «չորսից ութ» բառերը փոխարինել «հինգից տասը» բառերով, իսկ նույն հոդվածի 3-րդ մասում «վեցից տասներկու» բառերը փոխարինել «ութից տասնհինգ» բառերով,

- ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասում տուգանքի առավելագույն չափը տասնապատիկի փոխարեն սահմանել քսանապատիկի չափով, որպես հանրային աշխատանքների առավելագույն տևողություն հարյուր ժամի փոխարեն սահմանել հարյուր հիսուն ժամ տևողությունը, որպես կարճաժամկետ ազատազրկման առավելագույն ժամկետ սահմանել երկու ամիսը, իսկ ազատազրկման առավելագույն ժամկետը մեկ տարվա փոխարեն սահմանել երկու տարին:

Նույն հոդվածի 2-րդ մասում տուգանքի առավելագույն չափը տասնապատիկից երեսնապատիկի փոխարեն սահմանել քսանապատիկից քառասնապատիկի չափով, որպես հանրային աշխատանքների տևողութուն հարյուր ժամից երկու հարյուր ժամի փոխարեն սահմանել հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությունը, որպես կարճաժամկետ ազատազրկման առավելագույն ժամկետ սահմանել երկու ամիսը, իսկ ազատազրկման առավելագույն ժամկետը երեք տարվա փոխարեն սահմանել չորս տարին:

Նույն հոդվածի 3-րդ մասում ազատազրկման ժամկետը երկուսից հինգ տարվա փոխարեն սահմանել երեքից վեց տարի:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Նախագծի կարգավորման առարկան և վերոնշյալ առաջարկները առաջարկում ենք համապատասխան փոփոխություններ կատարել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում՝ ապահովելով իրավակարգավորումների համաչափությունն ու համակարգային ամբողջականությունը:

Մասնավորապես, անհրաժեշտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի՝

- 44. 1-ին հոդվածի 1-ին մասում «երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի» բառերը փոխարինել «չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի» բառերով, իսկ 2-րդ մասում «չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի» բառերը՝ «ութհարյուրապատիկից հազարվեցհարյուրապատիկի» բառերով,

- 44. 2-րդ հոդվածի 1-ին մասում «հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի» բառերով, իսկ 2-րդ մասում «երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի» բառերը՝ «չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի» բառերով,

- 110.2-րդ հոդվածի 1-ին մասում «հնգապատիկից տասնապատիկի» բառերը փոխարինել «ութսունապատիկից հարյուրապատիկի» բառերով, իսկ 2-րդ մասում՝ «տասնապատիկից երեսնապատիկի» բառերը՝ «հարյուրապատիկից հարյուրքսանապատիկի» բառերով,

- 178-րդ հոդվածի 1-ին մասում «երեսնապատիկի» բառը փոխարինել «հիսնապատիկից հարյուրապատիկի» բառերով:

Բացի այդ, հարկ է նկատել, որ նախընթաց օրենսդրական վերանայումների արդյունքում ոստիկանության ծառայողին կամ զինծառայողին վիրավորելու և ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու վերաբերյալ վարչական իրավախախտումների գործերի քննության իրականացումը վերապահվել է ՀՀ ներքին գործերի նախարարությանը:

Հատկանշական է, որ նշված գործերի քննությունը ՀՀ ներքին գործերի նախարարությանը վերապահելն առաջացնում է էական կազմակերպչական խոչընդոտներ, որոնք ազդեցություն են ունենում նաև վարույթի պատշաճ իրականացման վրա:

Մասնավորապես, ի տարբերություն այդ գործերով արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող Ոստիկանության, որի ծառայողները ներկայացված են ՀՀ ամբողջ տարածքում, ՀՀ ներքին գործերի նախարարության իրավասու աշխատակիցները, որպես կանոն, տեղակայված են նախարարության կենտրոնական մարմնում, իսկ նման գործերի տարածվածությունն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը: Բացի այդ, ՀՀ ներքին գործերի նախարարությունը պետք է օժտված լինի հսկողական իրավազորությամբ, մասնավորապես, որպես վերադաս վարչական մարմին, ըստ անհրաժեշտության, գնահատի ենթակա մարմինների, տվյալ դեպքում՝ Ոստիկանության կողմից կայացված ակտերի իրավաչափությունը:

Վերոգրյալի հիման վրա՝ առաջացել է նշված դրույթները վերանայելու հրատապ անհրաժեշտություն:

Ուստի առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 172.3-րդ և 182-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և որոշումներ կայացնելու

իրավասությունը վերապահել Ոստիկանությանը՝ զուգահեռաբար վերանայելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի փոխկապակցված դրույթները:

Մասնավորապես, առաջարկում ենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի

- 224-րդ հոդվածի 1-ին մասում «172.2-րդ,» բառից հետո լրացնել «172.3-րդ,» բառը, իսկ «181-րդ,» բառից հետո՝ «182-րդ,» բառը:
- Օրենսգրքի 224. 3-րդ հոդվածի 1-ին մասից հանել «172.3-րդ, 182-րդ,» բառերը:
- Օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «172.3,» և «, 182» թվերը,
- Օրենսգրքի 267-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, 182» թիվը,
- Օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասում «, 180[1] և 182» բառերը փոխարինել «և 180[1]» բառերով:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ